Յակոբ աղայի՝ ընթեռնլով զգիր նորին։ Զկնի բազում բանից և յայտ առնելոյ զպատճառ գալստեան իւրոյ, առաջի եւ նմա զվարձ ծառայութեանն լինիլ առատ. եթէ չահեսջիք զիս ասէ ըստ արժանաւորութեանս, իմ է հոգալ զգործն՝ որոյ վասն եկեալ եմ։ Թարգմանն ոչ ինչ ասացեալ նմա, ծանուցանէ Յունաց և Լատինաց զբանս նորին, և միաբանութեամբ սահմանեն տալ նմա յերից վանաց 15,000 դահեկան. և 'ի կրկին պատահիլ առն Թարգմանին՝ հարցանէ նմա զմիտս վանականաց, և նա ասէ՝ դու ըստ պատուոյ քո կատարեա ըստ օրինի զգործն՝ նոքա պատրաստ են չահել զսիրտ քո, այլ նա պնդեալ եկաց թէ պահանջեմ յերից վանաց 30,000 դահեկան, եւ եթէ ոչ կամիք՝ դուք գիտասջիք, զի այս գործ Արքունի է՝ տամ ընթեռնուլ զհրովարտակն 'ի դատարանի՝ և դառնամ յետս, յայնժամ արարէք և դուք որպէս և կամիք։ Լուեալ զայս վանականաց՝ յանձն առին տալ զգումարն զայն, այլ նա զգուշացոյց զնոսա ամենեւին չհանել զբանն 'ի վեր, ոչ դատաւորին և ոչ այլոց, զի մի մեծասցի իրն յաչս նոցա, այլ ասել թէ խոստացաք տալ 5,000 դահեկան յերից վանաց։ Եւ յետ այնորիկ քննութիւնք և դատաստանք կատարեցան 'ի դատարանի. դատաւորն գրեաց Իլամ և այլազգիք հանրագիր բազմակնիք, թէ փոլիցայք Մէհէմմէտ Փաշայի էին բռնութեամբ, եւ ցարդ չէ տուեալ ումեք գրամս ինչ՝ և առաքեցին 'ի Դուռն։ Եւ մինչ սոքա զբաղեալ էին յայս գործ, Ապու Մէրագ ստիպէր առաքել 'ի Յոպպէ զՏեսուչս վանօրէից 'ի պատճառս գալստեան ուխտաւորաց, այլ նոքա հազիւ զերծեալ էին 'ի ձեռաց նորա, ոչ կամեցան գնալ, այլ արարին պատասխանի՝ զի ինքն առաքեսցէ զուխտաւորս, զի բազմութիւնք զօրաց պատեալ էին զքաղաքաւն և զնոքօք։

Մէհէմմէտ Փաշայ իրազեկ լեալ եղելոցն Երուսաղէմի՝ կողոպտեաց զՆախջեւանցի ուխտաւորս Հայոց՝ առեալ 'ի նոցանէ 18 քսակս արծաթոյ, և ահապարեալ փախեաւ 'ի Դամասկոս (1805. 'ի 21 Նոյեմբերի)։ Տեսուչք և միաբանք դարձան 'ի վանօրայս Յոպպէի։

Կուսակալն Դամասկոսի Ասլտուլլահ Փաշայ եկն յԵրուսաղէմ ըստ սովորութեան՝ Հայք հազիւ զերծան 'ի ձեռաց